*Նա դեռ իր խօսքը չի ասել աշխարհին։*

* * *

*Եւ ահա այս մանուկ ու միամիտ ժողովուրդն է, սեւերի երազուն զաւակը, որ յանկարծ ճակատ առ ճակատ բոլշեւիզմին հանդիպեց, ինչպէս հանդիպում ես մեծ ճամբաների աւազակին։*

*Հոգեւոր ու բարոյական թալանը մեծ չէ.*

*Համայնավարութի՞ւն...*

*Մի տեսակ համայնք միշտ գոյութիւն է ունեցել Ռուսիայում եւ ռուս մուժիկը չի խրտչում այդ բառից աշխատելով նրա բովանդակութիւնը յարմարցնել իր հոգու չրջանակին։*

*Ի՞նչ կար աւերելու։*

*Ընտանի՞քը...*

*Ցարիզմը, ճորտութիւնը վաղուց էին այն քանդել, կարդացէք նորէն ու նորէն Տոլստոյի «Ցարութիւնը» եւ մանաւանդ նրա «Խաւարի իշխանութիւնը», Կարդացէք Մ. Գորկու «Մանկութիւն»ը։*

*Բոլշեւիզմը ռուս ժողովրդի կա՞մքը ճըլկեց. բայց այդ կամքը այնպէս թոյլ է եղած միշտ եւ այնքան ճկուն բոլոր տեսակի բռնութիւնների տակ։*

*Ազգային ու ընտանեկան աւանդութի՞ւնները. հողին, խրճիթին, գերեզմաններին, հին-հին յիշատակարաններին են կապուած աւանդութիւնները. հաստատուն կենցաղի, որդւոց որդի անցնող, հազար սերունդների հոգեւոր, իմացական կեանքի, փառքի, տառապանքի, պայքարի ու յաղթանակի, լացի ու խնդութեան ծոցից են ժայթքում ժողովուրդների հաւատամքներն ու սրբութիւնները։ Ազատ, անկախ հասարակական, ազգային կեանքը, անդադրում մշակոյթով գեղուն ու բեղուն պատմութիւնն է որ մէկ ցեղի կապում է իր մայր երկրին, իր ծննդավայրին։ Քարէ մի հին կամար, որի վրայ նախնիք են խոկացել, մի աւերակ վանք, ուր հայրերն են աղօթել, մի հինաւուրց զանգակատուն, ուրտեղից առաւօտ երեկոյ լսւող յուկան զօղանջը սերունդներ են ունկնդրել. մի հին բերդ, աշտարակ, դղեակ, հին-հին քաջերի ու հերոսների գերեզմաններ, որոնց հետ կապուած է մի ժողովրդի ամբողջ հոգեւոր կեանքը, բիւր անտեսանելի խորհրդաւոր թելերով — այս բոլորը դրեթէ անծանօթ են ռուս մարդուն։ Նրա քաղաքակրթութիւնն էլ իր պէս մանուկ է։*

*Բնութեան դէմ յարատեւ ու յամառ պայքարը, որի մէջ է թրծուել այնքան ժողովուրդների կորովի կերպարանքը, անծանօթ է ռուս մարդուն։ Նրա գետերը սահանք չունին, ու նա չը գիտէ ինչ ասել է փրփրուն ալիքները սանձել ամբարտակներով եւ ջուր չորթել իր հունձերի համար. Նրա ջուրը միշտ երկնքից է թափւում, նա չը գիտէ ժայռերը փշրել, լեռների կուրծքը չանդրել հատիկ ցանելու, խաղողի այգի կամ ծառաստաններ մշակելու համար. Նա անծանօթ է լեռնային դժուարին ճամբաներին, խորտակուող ու բարձրացող բլուրների հրաբխային կատաղութեանը. Նա անծանօթ է լեռները թափ անցնող տունէլներին, որովհետեւ իր տափարակ հայրենիքը իսպառ թափուր է քար ու սարից։*

*Ռուս մարդը իր հայրենի բնութեան ծոցում երբեք պէտք չի զգացել իր կամքը լարել եւ ջիղերը մարզել յաղթանակի համար. Նրա աշխատանքը կատարուել է իր գետերի պէս դանդաղ ու հանդարտ. ցրել է ցորենի հատիկները պարարտ սեւ հողի մէջ, պառկել խրճիթում եւ Աստուած կանչել։*

*Բնութեան պայքարին անծանօթ՝ ռուս մարդը ոչ հայկական Վիշապաքաղ Վահագն ունի եւ ոչ յունական Հերքուլէս։*

*Յունո-հռոմէական քաղաքակրթութիւնը զօրով պատուաստուած հազիւ-հազ ծաւալել է մեծ քաղաքներում։*

*Լայնածաւալ Ռուսիան ոչ իր Անին ունի, եւ ոչ Պոմպէյան։*

*Այս պատկերի առջեւ ակամայ միտս է գալիս հայ ժողովուրդը, իր դարերի ստեղծագործական տիտանեան աշխատանքով եւ այն՝ անթիւ աւերումներից յետոյ։ Եւ հզօր, անքակտելի կապը, որ ունի հայ ժողովուրդը դէպի իր հայրենի աշխարհը, դէպի նրա քարը, սարը, դաշտը, առուն, աղբիւրը, աւերն ու շէնը արդիւնք է այդ բեղուն ճիգերին։*

*Թիւրքական սահմանն անցայ 1910 թըւին, եւ առաջին հայ գիւղի՝ Քօրունի ռէսի տանը ասպնջականութիւն գտայ։ Ռէսի որդին երկար ու ցաւագին պատմութիւններ ունէր*